

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1919 - ՆՈՅԵՄԲԵՐ - 1919

Խմբագրական. Մեզու Շիրակայ. — Երանիս տրամբ քեզ Հայոց աշխարհ	321
Սարգիսեան Հ. Բ. — Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի.	325
Այտընեան Հ. Գրս. — Եւագունեան դրօշակին (Բանաստ)	331
Սինանեան Հ. Խորէն. — Ժամանակագրութիւն Ս. Գրոց ըստ Շ. Հայկայ	331
Մեզու Շիրակայ. — Քաջասիրտ Թագաւորը	335
Սինանեան Հ. Խորէն. — Այցելութիւն մը արևու	341
Այտընեան Հ. Գրս. — Մանր գիտելիք	345
Արսէն-Երկաթ. — Հնդիկ աշուղը (Բանաստ)	346
Այտընեան Հ. Գրս. — Բամ... փորոտան	348
Թ. Տէր Ստեփանոս. — Աշխատութիւն մարդոյ.	351

ՀԱՅ ԾԷՍԸ

1911 տարւոյ ազգային սիւննողոսի
գործոց մէջ

ԱԶԴ

1914ն էր, Հազիւ ձեռքս հասած Սիւննողոսին նորատիպ Գործերը, որ եկեղեցական մտաւոր նոր ապարդէզ մը կը բանային մեր առջև, նստած կղզեկիս առանձնութեան մէջ՝ ուի ուշով ու խնդութեամբ կը կարդայի եռանդազին եւ կը նշանակէի խորհրդածութիւններս: Զէի մտածեր բնաւ, — ո՞վ կարող էր մտածել, — թէ քիչ մը վերջ պիտի պայթէր աշխարհաւոր պատերազմը, որ մեր Հովիւներն իրենց հօտերուն հետ զազա-նաց ժանիքներուն զոհ պիտի դնէր, զգեցնելով անոնց մարտիրոսաց կարմիր պատմունանը. որ պղծել եւ ապականել պիտի տար մեր եկեղեցիքն ու սրբութիւնքը. եւ մեր երկիրը պիտի պատէր աղէտ մ'այնքան ահաւոր, որ խրայելի եւ Թոր-զոմայ հին եղբրեղաց միասնաժող կոծերն անբաւական պիտի լինէին ողբալու, եւ ապիկար՝ ամոքելու մեր կսկիծը:

Անցաւ փոթորիկը կործանմամբ ամբարշտաց, եւ մեր թուառ ազգին բեկորները կը հաւաքուին այժմ իրարու քով, վերակազմելու քայքայուած մարմինը, վերաշինելու աւերած տունը: Կ'ար-ծարծի մեր յոյսն յաւերժական փրկութեան ջա-հին հանդէպ՝ որ կախուած է մեր առջև: Պիտի դառնանք մահուանէ ի կենսո, պիտի յառնենք մեր իսկ անիւնէն՝ նման փրկելի հալին: Պիտի կանգնին մեր Հովիւներն ալ, եւ մեք պիտի խմ-բուինք անոնց շուրջ մեր նորարկում ու նորա-գարդ սուրբ փառայիններուն մէջ:

Այս յոյսն է, այս հաւատքն է՝ որ կը մղէ զողզոյ ձեռքս՝ յանձնելու մեքենային սոյն աշ-խատութիւնը, որ հինգ տարիներէ ի վեր լքեալ կը մնար փոշիներու ներքեւ: Յետ մեր չարարա-նաց՝ անմիջական պահանջի մը զոհացումը տա-լու չէ այս փորձիկ գործը. այլ ապացոյց մը՝ թէ քաղաքակիրթ ժողովրդները, որ կոշկոճուած ճալուած բռնութենէն, մերկէն ոստաքանց ու տերեւաթափ ծառի մը պէս կը բողբոջին վերստին, կը սկսին ապրել իրենց գործունեայ, մտաւոր եւ հոգեւոր կենաց բոլոր ոստերուն մէջ միանգա-մայն:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀՅՈՒՆԻՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՌՈՂԱՅԵՑԻՈՑ

Լոյս տեսաւ Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի երկասիրած Հռովմայեցւոց Պատմու-թիւնը, զարդարուած բազմապիսի պատկերներով: Լուրջ գործ մ'է, ամենայն ինամբով պատրաստուած, որ բաց ի պատիւ քերելէ հեղինակին մատենասէր եւ ժրպշան աշխա-տութեանը, կը յուսանք որ միծապէս օգտակար լինի Հայ երիտասարդութեան:

Ուստի կը մաղթենք ուսումնաստենք մանկուցան, ընտիր դասագրքիս ընթերցումով, կազմել ողջամիտ սկզբունքներ, անյողըողը հաւատք, եւ անպարստ ուղիղնասիրու-թիւն: Որով երբեմն ալ իրենցմով պարծի Հայաստանն, ետէ գիտելու Հռովմայեցւոց պէս՝ պահել Միութիւն, պաշտպանել Ազատութիւնը, բարձրացնել անոր շնորհալիւն եւ դարաւոր իշխանութիւնն, մեր կնաշխարհի բնական սահմաններու մէջ: Գինն է ֆր. 5.—

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ARMENIA and the Settlement (վայելա-տիպ 44 էջերէ կազմուած գրքոյկ), որ է՝ Տեղեկագիր Համաժողովին որ տեղի ունեցաւ 1919 Յունիս 19ին, վէսթմինսթըրի կեդրոնական Դաւիթիէն մէջ, Հայկական խնդիրներուն ի նկատաւ: — Այս հանդէսը կազմակերպած էր (The Armenien Bureau Հայա-Ազգայնական տո-ղովը, որուն մեծապատիւ քարտուղարը — պ. Ա. Բաֆֆը — խմբագրելով հրատարակել է բոլոր այն ճառերն ու խօսքերը որ հանդիսին ներկայ գտա-նուող հեղինակաւոր անձինք՝ ազնուամեծար դա-սակարգի մը ատենին մէջ արտասանած են: — Ահաւասիկ պարտականութիւնը վերոյեղեալ հա-տորիկին.

Նախ՝ թողցիկ քաղուած մը՝ Թայմըզի Օգոս-տոս 13 թուին և բազմաթիւ երեսփոխանաց հայանպատ խօսքերուն ամփոփումն: Ապա՝

1. Փարիզու Ազգային Պատուիրակութեան (երկու նախագահներուն) միացած հեռագիրները: 2. Զատագովական և համակրական նամակներ:

3. Հանդիսին ներկայ եղող անձերէն քանի մը զիխարները:

4. Ընկերութիւններու և Հաստատութիւններու Ներկայացուցիչներէն ոմարք:

5. Զայտարարութիւնք խողովականաց:

6. 7. Զատեր՝ Rt. Hon. Viscount Bryce, T. P. O'Connor, M. P. 8. Որոյմունք. 9. Սահմանագիծ Հայաստանի (քարտէս). 10-13. Զատեր՝ Dr. Ronald Burronesh, Dr. John Clifford, Anenfin Williams, M. P. ի, Noel Buxton, 14. Որոյմունք, 15-19. Զատեր՝ G. P. Gooch, Athelston Biley, Sir Robert Perks, Dr. Paul S. Leinbach (ի դիմաց Ամերիկեան Նպաստամատոյցի), Աբել Վ. Աբրա-համեանի, 20. Գոհաբանական ուղղործներ առ Նախագահ դերկոմս Գլասթօն, 21. Վերջնայոս պատասխանը, 22. Sir Arthur Grosfieldի ճառը, 23. Զօրավար Անգրանիկի ճառը:

Melik S. David-Bey — «MANUEL DE LA LANGUE ARMÉNIENNE». Grammaire, Conversation, Vocabulaire. — Paris. — H. Turabian, éditeur, 1919, (էջ 152, I-VII. 8առա-շաբանով):

Camille Mauclair. — POUR L'ARMÉNIE LIBRE, Pages écrites au cours de la Grande Guerre. Paris. Imprimerie M. Flinikowski 216, Boulevard Raspail, MCMXIX (էջ 56):

K. Y. Basmadjian. — LA CILICIE, son passé et son avenir avec deux Tables généalogiques DES BARONS ET ROIS DE LA

PETITE ARMÉNIE. Paris, chez J. Gamber, Libraire — Commissionnaire, 7, Rue Danton (6e), 1919, (էջ 48):

L'ARMÉNIE. Conférence faite par M.mc Gabriel Réval, le 9 Mai 1919, au Théâtre Édouard VII. Paris, Imprimerie Dubreuil, Frèrebeau et Cie. 18, Rue Clauzel, 18, 1919, (էջ 53. — Հնորհակալութեամբ տեսցուած՝ փա-րիզու Հայ Տեղեկատու Մարմին):

FROM TURKISH TOLLS. The Narrative of an Armenian Family's Escape, by Mrs. Esther Mugerditchian. — London: C. Arthur Pearson, Ltd. 18, Henrietta Street, W. C. 2. — 1918 (պատկերազարդ մաքուր տպագրութիւն, 51 էջ, զոհութեամբ ընդունած ենք տեար Թով-մաս Գ. Մկրտիչեանէն, հետեւեալ երկու հատա-րիկներն եւ):

ԹՈՒՐԿԻՅԱՆ ԳԵՆՆԵՆԸ Հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը: Ահաւաստել պատմութիւն: Տիկին Եսթըր Թ. Մկրտիչեանի: 1918, տպա-գրութիւն Ալամ Սեփանեան, Աղքատագրիւ (վերոյեղեալ հատորիկին ամբողջութիւն հայե-րէնը, 72 էջ, գինը՝ 5 դր. ողջ):

ՏԻՐԱՆԱԿԻՐՏԻ ՆԱՀԱՅԳԻՆ ԶԱՐԴԵՐԸ և Գիրքերու զազանութիւնները (ահաւաստել պատմութիւն). գրեց Թովմաս Գ. Մկրտիչեան (Անգլիական նախկին դեր-հիպատոս Տիգրա-նակերտի): Տպարան Գրիգոր Ճիհանեան, Գա-հրէ, 1919, (պատկերազարդ 125 էջ, — նաև կու տայ, թէ և համառօտ կերպով, յոյժ շահեկան պատմական ծանօթութիւններ Հայ ազգին հինգ դարերէ ի վեր թրքո-թաթարական տիրապետու-թեան տակ անցուցած երկունքին, և քաղաքա-կրօնական անցքերու մասին):

Ստացած ենք նաև բանցիկներ և օրագիրներ.

THE STORY ET CRUCIFIED ARME- NIA, by Armenouhie Tashjian Lamson, (from the Seattle Daily Times, Jan. 19, 1919):

Սան Ֆրանչիսքոյի (Քալիֆ.) Հայածնունդ Հայերու կեդր. Գանձախուսմբին — Ապրիլ 20, 1919 — մէկ թողցիկը:

Տեսք Մախոնեանէն L'Homme Libre օրա-գրին թիւ 1161, 1171, 1173, 1179 որոնց մէջ կան հայանպատ յօդուածներ:

ՏՈՒՅԱԿ ԱՆՏԱՅՏ ՏԱՐԱԳՐԵԼՈՑ ԵՒ ԳԼՏ-ՆՈՒԱԾ ՎԵՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ: Թիւ 1-10.

«ԵՐԻՏԱՍԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի ՕՐԱՅՈՑՆԵՐՈՒ Ժրարը. (1918 և 1919):

Հրատարակուած է Տպարանիս Նոր Գրացուցակը: Փափաքողաց կ'ուզարկուի: Գրավաճառներու և անհատական յաճախորդներու մասնաւոր ուշադրութիւնը կը հրահրենք, որպէս զի,

Ա. — Յանձնարարուած զրոց անուններն ու գիրները գրեն որոշ և Գրացուցակի այբուբենին կարգաւ:

Բ. — Կանխապէս ուշադրութիւն դնեն աստղանիշ (*) ու հազուագիտ գրքերուն ու անոնց յատուկ գիրներուն վրայ: Յանձնարարութիւն մը գործադրուելէն վերջ վրձարմանց ո՛ր և է դժուարութիւն և առարկութիւն անընդունելի է:

Գ. — Գրոց գիրները ո՛չ թէ իտալական լիբա այլ ԳԱՂՂԻԱԿԱՆ ՖՐԱՆՔՈՎ, հաշուելի է. հակառակ պարագային՝ յանձնարարութիւնը առկախ կը մնան, մինչև պատուիրողի հաւանութիւնն առնուի:

Դ. — Անհատական յաճախորդները՝ իրենց յանձնարարած զրոց հետ կանխիկ ուղարկելու են նաև անոնց արժէքը՝ հաշուելով Recom.էի և ծրարներու ճանապարհածախսերը: Աւելցած դրամը՝ իրենց տրամադրութեան կը պահուի, կամ ետ կ'ուղարկուի եթէ փափաք յայտենն:

Ե. — Իսկ Տպարանիս յարգելի Գրավաճառ — Գործակալները պարտական են փակել իրենց հաշիւները նոյն տարւոյ շրջանին մէջ երկու անգամով, մին Յունիս ամսոյ վերջը, միւսը Դեկտեմբերի վերջը, յաջորդ տարւոյն յանձնարարութիւնը առկախ չմնալու համար:

Զ. — Տպարանիս յարգելի Գրավաճառ — Գործակալները 15% զեղչ ունին մինչև 300 ֆր. արժողութեամբ միանգամով ըրած յանձնարարութեանց վրայ, իսկ 300-1000 ֆր. վրայ 20%:

Է. — Ազգային Որդանոցներ, Գրատուններ իրենց վաւերական թղթերով ու կնքով կրնան ունենալ % զեղչ մը նախախորհրդակցութեամբ Տպ. Տեսչութեան հետ:

Ը. — Ատողանիշ (*) և Հազուագիտ զրոց վրայ զեղչ չէ կարելի շնորհել:

Մեր հասցէն

IMPRIMERIE - LIBRAIRIE ARMÉNIENNE

St. Lazare

VENISE (Italie)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՔԱՐՏԵԶ

Հայաստանի նոր արևածագին զանազան քարտէզներ հրատարակուեցան հոս ու հոն թերթերու, լրագիրներու մէջ, գունատուր և անգոյն, որոնք միայն մեր Ազգային հիկ իրաւաց սահմաններն ցոյց տալու բնոյթն ունէին: Բայց յետ միանգամ որոշուելու, անոնք իրենց գործը կատարած կը համարին, և ուրիշ ոչ մէկ նպատակի չեն ծառայել: Յայտնապէս զգալի պէտք մը լրացնելու համար, Միլիթարիան Միաբանութիւնն ձեռնարկեց կատարեալ և ամբողջական Հայաստանի Քարտիսի մը պատրաստութեան, որ ի լոյս պիտի գայ անշուշտ, գունատիպ, յետ Ազգային սահմաններու որոշուելու հետ՝ քաղաքաց ու տեղեաց անուններու փոփոխմամբ, Ներկայ անհրաժեշտ պէտքերու համար սակայն, փութայինք Տատեանի 1849ի Հայաստան աշխ. մեծադիր և փոքրադիր գունատիպ ճոխ քարտէսներու վիճակի կրկին հրատարակութեան, որ ոչ նուազ օգտակար պիտի ըլլայ առ այժմ առանձնականաց և դպրոցներու համար: Վաճառման համար պատրաստ են:

Մեծադիր 57×80 գունատիպ աշխ. քարտիսին գինն է ֆր. 5. —

Փոքրադիր 24×32 » » »

50
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՈՒՐ